

Հովհաննեսի պատմություններ

ԿՈԼԻՆՈԶՆԻԿ

ՔԻՄԻՉԱՏՈՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ  
ԹՐՈՖ. Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ

30 JAN 2018

ԿՈՒՅԵՆԱՎԱՐԱԿ  
ԴՐԱ. ԴԱ. ՐԱ. Ն

ԿՈԼԽՈԶՆԻԿ  
ՔԻՄԻԶԱՏՈՐ

Խմբագրաբյումբ  
ՊՐՈՖ. Պ. ԳՈԼԱՆԹՈՅՉԵՆԻ



1935

ԳՅՈՒՂՋՐԱՏ

ՏԵՐԵՎԱՆ

16 95


## ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԽՆԱՄՔԸ

Մեզ մոտ բամբակի բերքատվության բարձրացման գործում  
մեծ գեր և կատարում քիմիական պարարտանյութերի գործա-  
ծությունը, դրա համար եւ ինչպես անցյալ տարիներում, այս  
տարի ևս բամբակի մեր հիմնական մասսի մեջ պարարտացված  
են: Սակայն միանդամայն սխալ և յենթադրել, թե միայն քի-  
միական պարարտանյութեր մտցնելով կարելի յե բամբակի բեր-  
քատվությունն ապահովել:

Հաղթագյուտ չեն այն դեպքերը, յերբ արհեստական պա-  
րարտանյութերը վոչ միայն հողի բերքը չեն ավելացնում, այլ  
նույնիսկ պակասեցնում են: Սրա պատճառն այն է, զոր հավա-  
տացած լինելով թե բամբակը պարարտացնելով մենք արդեն իսկ  
ապահովում ենք նրա բարձր բերքատվությունը, այլև քաղնա-  
սի, վոռոգման և խնամքի այլ աշխատանքների վրա անհրաժեշտ  
ուղարկություն չենք դարձնում:

Սակայն մենք լավ գիտենք, վոր պարարտանյութերը հա-  
ջողությամբ ոգտագործում են վոչ միայն կուլտուրական բուլ-  
ուսերը, ինչպես բամբակը, այլ նաև մոլախոտերը. վերջինները  
նույնիսկ ավելի մեծ հաջողությամբ են ոգտագործում պարար-  
տանյութերի միջի սունդը, վորովնետե նրանք տեղական կլի-  
մայական պայմաններին ավելի լավ են հարմարված և հողի  
նկատմամբ ավելի քիչ պահանջնոտ են: Մինչդեռ կուլտուրական  
բույսերը, և հատկապես բամբակենին, համեմատաբար ավելի նուրբ  
են և հողի հատկությունների նկատմամբ ել ավելի պահանջնոտ:

Վորպեսզի մենք հնարավոր զարձնենք սննդանյութերի՝ բամ-  
բակենու կողմից լրիվ ոգտագործելը, անհրաժեշտ և նախ ազա-  
տել բամբակենին իր մրցակիցներից—մոլախոտերից, այսինքն՝  
պայքարը մոլախոտերի դեմ ուժեղացնել, այլապես պարարտաց-  
րած գաշտերում մոլախոտերն ել ավելի ուժեղ կզարդանան և կզըր-  
կեն բամբակենին վոչ միայն անհրաժեշտ սննդանյութերից, այլև  
ջրից ու լույսից և խեղդելով բամբակենուն նրա անեցողությունը  
կթուլացնեն և բերքը կպակասեցնեն:



11-289149

Ուրեմն պարարտացումը լրիվ ոգտագործելու և բամբակի բերքը բարձրացնելու հիմնական պայմաններից մեկն ել մոլախոտերի դեմ ուժեղ պայքարն եւ:

Բացի մոլախոտերից ազատ հողից, բամբակն իր լավ զարգացման համար պահանջում են նաև ջրով և ողով հարուստ, փուխր հող, վորպիսի գրությունն ստեղծվում են թե նախացանքային և թե մանավանդ հողի հետցանքային մշակությամբ:

Հետցանքային մշակությունը, ինչպես նաև մոլախոտերի վոչնչացումը հանդիսանում են բամբակի բարձր բերքատվության ամենահիմնական աղղակներից մեկը: Բամբակի աճեցողությանը նպաստելու, նրա՝ թե հողի մեջ յեղած և թե պարարտացման միջոցով հողը մտցրած սննդանյութերի լրիվ ոգտագործման և բերքատվությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ և հողի սիստեմատիկ փմբեցումը և հատկապես այն ժամկետներին, վոր նշված են Հողժողկոմատի կողմից մշակված ագրոկանոններում:

Բերքի բարձրացման համար պակաս նշանակություն չունի նաև ցանքերի նոսրացումը և վոռոգումը:

Ուստի բամբակի բարձր բերքատվությունն ապահովելու համար անհրաժեշտ ե ամառային այս աշխատանքները կատարել ժամանակին և վորակով, առանց վորի թե պարարտացումն անոգուտ կլինի և մեր մինչ այժմ կատարած աշխատանքն այն բարձր եփեկաը չի տա, վորին ձգտում ենք մեր բոլոր ուժերով:

## ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Պարարտանյութերը աացիոնալ ոգտագործելու խնդրում մեծ նշանակություն ունի պարարտացման ժամանակը: Հանքային պարարտանյութերը հողի մեջ մտցնելու ամենալավ ժամանակը համարվում ե գարնան կամ աշնան վարի և կըկնավարի ժամանակը: Բայց յեթե ինչ-ինչ պատճառների հետեւանքով հողը ժամանակին չի պարարտացվի, ապա վորոշ պայմաններում կարելի յե այն պարարտացնել ցանքը կատարելուց հետո, նույնիսկ բույսի բուռն աճեցողության և ծաղկման ժամանակը: Այդպիսի

ուշ պարարտացումը կոչվում է վեգետացիոն պարարտացում, կա կեարեսալին պարարտացում, վորովհետեւ պարարտանյութերը հողի յերեսն են շաղ տրվում:

Հայաստանի պայմաններում այդ ուղղությամբ դեռևս վորձեր չկան, վորոնց հիման վրա ձիշտ կարողանայինք ասել այն միջոցառությունների մասին, վոր պետք ե կիրառել մակերեսային պարարտացման ժամանակը: Հիմնվելով ուրիշ յերկրներում կատարված փորձերի վրա՝ կարելի յե ասել հետևյալը:

1. Վեգետացիոն պարարտացումն արդյունք կտա այն ժամանակը, յերբ ձիշտ հաշվի յեն առավում հողի և ջրի պայմանները, բույսի տեսակը և նրա աճեցողությունը, պարարտանյութերի տեսակը և ագրոտեխնիկական մյուս պայմանները:

2. Շատ ուշ վեգետացիոն պարարտացումն առաջին տարում արդյունք չի տալիս:

3. Վեգետացիոն պարարտացման համար ոգտագործվող պարտանյութը հողի վարվող շերտի հետ չի խառնվում, այլ մնում ե ավելի վերին շերտերում և յեթե այդ պարարտանյութը ջրի մեջ հեղած չի լուծվում և կամ նրա սննդանյութը հեշտությամբ կլանվում ե հողի կողմից, ապա այդ պարարտանյութն առաջին տարում արդյունք տալ չի կարող, քանի վոր նա չի հասնի բույսի արմատներին:

4. Վեգետացիոն պարարտացումից հետո ըստ հնարակին պետք ե պարարտանյութը խառնել հողի հետ, առանց բույսի արմատներին զանա պատճառելու, ապա պետք ե բավ ջրել հողը, վորպեսի պարարտանյութը լուծվելով հասնի բույսի արմատներին:

5. Վեգետացիոն պարարտացման ժամանակ պետք ե զգուշ լինել, վոր պարարտանյութի կտորները կամ փոշին չթափվի կուլտուրական բույսի տերենների վրա և առհասարակ կանաչ մասերի վրա. դրանից կտուժեն բույսերը:

6. Մակերեսային պարարտացման համար ոգտագործել միայն ազոտական պարարտանյութերը, իսկ նրանցից ել գերազառաւթյուն տալ ազոտաթթվական ամոնիումին և լիյնասելիտացին: Ջրով ապահովված տեղերում և թեթև հողերում կարելի յե նաև գործադրել ամոնիում սուլֆատ:

Հայաստանի բամբակացան շրջաններում այս տարի կիրառվելու յե վեգետացիոն պարարտացում, վորը մեծ մասամբ կղուգաղիպի բամբակի կոկոնակալման շրջանին: Այդ աշխատանքներում պետք ե ղեկավարվել հետևյալով:

Բամբակը պարարտացնել միայն ազոտական պարարտանյութերով, չգործադրել վոչ սուպերֆոսֆատ և վոչ տեղական պարարտանյութեր (մոխիր, ավերակների հող, աղբ և այլն):

Պարարտանյութի դոզան մեկ հեկտարի համար սահմանել հետևյալը: յեթե այդ շրջանում ազոտի նորմալ դոզան ընդունված ե 90 կիլոգրամ, ապա բավական կլինի տալ 60 կիլոգրամ, իսկ յեթե 60 կիլոգրամ ե, ապա տալ 45 կիլոգրամ. զինա հողերում տալ 45 կիլոգրամ ազոտի հաշվով:

Հողերը լավ պարարտացնել առաջին վեգետացիոն շրից կամ ամենաուշը յերկրորդ շրից առաջ. յերկրորդ վեգետացիոն շրից հետո չպարարտացնել:

Պարարտանյութը շաղ տալ ակոսների մեջ համաչափ:

Առվույտի դաշտերը կարելի յե մակերեսային պարարտացում անել, դրա համար գործադրել միայն սուպերֆոսֆատ, հեկտարին 75 կիլոգրամ ֆոսֆորաթթվի հաշվով: Սուպերֆոսֆատը աղ տալ առաջին կամ յերկրորդ հնձից հետո, ապա փոցիել և ջրել:

Քանի վոր այս աշխատանքներն առաջին անդամն են մասսայական ծավալ գոտնում: Հայաստանում, ապա անհրաժեշտ ե յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ կատարել մի փոքր հաշվառում՝ վեգետացիոն պարարտացման արդյունքների մասին Այդ առթիվ ցուցմունքներ ստանալու համար կարելի յե կապվել ՄՏԿ-ների քիմիկատորների հետ կամ դիմել պարարտացման գիտ. հետ. կայանին անձոմք կամ գրավոր՝ Յերևան, Արովյան փող. № 123, պարարտացման կայան:

### ՑԵ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ԿԱՏԱՐԵՆՔ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՊԱՐԶ ՓՈՐՁԵՐ\*)

### ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՊԱՐԶ ՓՈՐՁԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Յուրաքանչյուր փորձ, վորքան ել այն պարզ լինի, պահանջում ե իմանալ վորոշ գիտելիքներ և փորձը ճիշտ կատարելու համար՝ համապատասխան ձև:

Գործի հաջողությունը նախ և առաջ կախված ե նրանից, թե ավագ փորձին մասնակցող կոլտնտեսականը վհրքան պատրաստ ե այդ աշխատանքի համար:

Այդ աշխատանքը ղեկավարող կոլտնտեսական - քիմիկատորը պետք ե լավ իմանա փորձնական գործի հիմունքները և հետաքրքրվի այդ գործով:

Առաջին խնդիրը, վոր փորձի ղեկավարը պետք ե իմանա այդ փորձի նպատակն ե, այսինքն՝ ինչ հարց ե նախատեսված պարզել ավագալ փորձով:

Յերկրորդ՝ վորքան հնարավոր ե, հարցը զնել պարզ, հասկանալի և մեկ փորձով ուսումնասիրել մեկ խնդիր և վոչ մի քանի խնդիր:

Յերրորդ՝ խիստ հետևել, վոր փորձադաշտի առանձին հողագտություրի վրա բոլոր աշխատանքները կատարվեն միաժամանակ և միատեսակ, բացի ուսումնասիրվող հարցից:

Չորրորդ՝ բացի այն հարցից, վորն ուսումնասիրվում ե, նաև աշացած բոլոր տեսակի պայմաններն ու աշխատանքներն ամբողջ փորձահողամասում պետք ե կատարվեն միաժամանակ և միատեսակ:

Մոսկվա որինակով. «Կոլխոզնիկ քիմիկատոր»-ի 2-րդ համարում ասված ե այն մասին, թե ինչպես պետք ե կազմակերպել փորձահողամասը: Այնտեղ ասված ե, վոր հողամասը պետք ե բաղկացած լինի յերկու մասից. 1-ին մասը պարարտացրած և 2-րդ մասը՝ չպարարտացրած կամ ստուգիչ: Այդ յերկու հողամասի մակերեսները միմյանց հավասար են լինելու:

Հեշտաց յերկու հողամասերն իրարից տարբերվում են միայն նրանով, վոր պարարտացրած մասում շաղ ե արված պարարտա-

\*) Մկնաբը տես «Կոլխոզնիկ քիմիկատոր» № 2:

նյութի վորոշ քանակ, վորի աղդեցաւթյունը մենք կամենում ենք պարզել: Այսպիսով, բոլոր մնացած պայմանները, այն և՛ հողի տեսակը, մոլախոտերով վարակված լինելը, դաշտի դիրքը, ջրի պայմանները, դաշտի պատմությունը վերջին հինգ տարում, վարը, կրկնավարը, փոցխելը, մարգոցելը, սերմի վորակը և տեսվարը, ցանքը, ջրելը և այլն յերկու հողամասում ել պետք ի լինի կատարված միաժամանակ և միատեսակ:

Հետագայում դաշտում կատարվելիք բոլոր տեսակի աշխատանքները—նոսրացումը, ջուրը, կուլտիվացիան՝ մասամասուների դեմ պայքարը նույնպես կատարվում են միաժամանակ և միատեսակ:

Յեթե հետագայում այդ յերկու հողամասերի միջև կնկատվեն վերոշ տարրերություններ (օրինակ՝ պարարտացրած մասում պետք չատ կամ պակաս լինեն մոլախոտեր), փորձի ղեկավարն այս բանը պետք և նշանակի դաշտային որագրում:

Հիշյալ փորձահողամասում կատարվելիք աշխատանքներից նոսրացումը մեծ նշանակություն ունի փորձի վորակի խնդրում: Այդ պատճառով փորձի ղեկավարը նոսրացման աշխատանքներն այնպես պետք և կազմակերպի, վոր վերջում բույսերի քանակը պարարտացրած մասում հավասար լինի չպարարտացրած մասում գտնվող բույսերի քանակին: Իրոք, ինչ կարող ե պատահել, յեթե չպարարտացված մասում բույսերի քանակն ավելի լինի, քան պարարտացրած մասում: Այն, վոր մեծ թվով բույսերից կստացվի շատ բերք, վորի պատճառով հետագայութիւն պարարտանյութիւնը անհնարի կլինի պարզել, դրա համար ել նոսրացման ժամանակ, նոսրացման աշխատանք կատարող կուտնասականները պետք և ունենան փայտից պատրաստված համալատախան չափ, փորի ոգնությամբ չափվելու յև բույսերի (բների) միջտարածությունը: Այսպիսով հնարավոր կլինի այս տարածությունների վրա ունենալ հավասար քանակով բույսեր:

Ամբողջ վեգետացիայի ընթացքում փորձի ղեկավարը պետք և որագրում նշի հետեւյալ դիտողությունները և հարցերը.

1. Պետք և նշել, թե այդ հողամասը 1930—է 4 թվերին մւմ կողմից և ոգտագործվել այդ նույն թվերին ինչ կուլտուրաներ են ցանքել, վոր արբիներին պարարտացվել և այլն:

2. Նշել այս տարի այդ հողամասի վրա կատարվող աշխատանքների տեսակը և ժամկետները:

3. Նշանակել ծաղկակալման ժամանակը հետևյալ ձևով:

Դաշտի պարարտացված և չպարարտացված հողամասերում առանձնացված ե 100-ական բույս, դրա համար պետք և 100 բույս համբեկ և նրանց շրջապատում փոքրիկ փոսեր բաց անել, կամ ծայրի բույսերի վրա կապել գունավոր շորի կտորներ, վորպեսզի հետագայում, յերբ պետք լինի, այդ բույսերը հեշտությամբ գտնվին: Նշանակված 100 բույսի նկատմամբ կատարվում են ծաղկման վերաբերյալ դիտողությունները: Դիտողությունը պետք և սկսել առաջին ծաղիկը յերեալու սկզբից և վերջացնել, յերբ 100 բույսից 50-ը ծաղկել են:

4. Նշանակել մասամասուների և հիվանդությունների տարածվելը և տարածման չափը (թույլ, միջակ, ուժեղ):

5. Նշանակել հասունացումը (կնդուղների բացվելը), վորը կատարվում և նույն 100-ական բույսերի վրա և նույն ձևով, ինչ վոր ծաղկակալման ժամանակ (Յ-ըդ կետ):

6. Բացի վերոնիշյալներից, որագրում պետք և նշել դիտությունների ժամանակ համարակած այս կամ այն հետաքրքիր խնդիրները, վորոնք կազ ունեն փորձի հետ:

Բերքահավաքից մեկ ամիս առաջ փորձադաշտերն ստուգվում են համապատասխան հանձնաժողովի կողմից, վորի կազմի մեջ մտնում են բամբակվարչության և պարարտացման կայանի ներկայացուցիչները, տվյալ լրջանի ՄՏԿ-ի ագրոնոմ-քիմիկատորը և կոլտնտեսության համապատասխան բրիգադիրը:

Նույն հանձնաժողովն ոգտագործելով տվյալ փորձի հատակագիծը (վորը կազմվում և ցանքի ժամանակ)՝ տեղում վերականգնում են փորձադաշտի սահմանները, առանձնացնում գաշտի յեղեքներից պաշտպանիչ հողամասերը և սահմանագծում փորձադաշտի հաշվառման յենթակա հողամասը:

Բացի այս, հաշվառման յենթակա հողամասում այս կամ այն պատճառի (մասամասուների, հիվանդությունների, չծելու կամ այլ պատճառի) հետեւյալով բամբակենուց աղատ տեղերը, ինչպես նաև խիստ վասաված, աննորմալ տեղերը պետք և չափել և նշանակել ու այդ մասերի բերքը հաշվի չափել:

Նման աննորմալ մասերի տարածությունները պետք ե

նշանակել պլանի վրա, վորպեսզի հետո առանձին հողակտորների բերքատվությունը հաշվելիս այդ նկատի ունենան:

Բերքահավաքի ժամանակ նախ հավաքում են վորձադաշտի այն մասերը, վոր հաշվառման չեն յենթարկվելու, իսկ հետո ինամբով հավաքում են հաշվառման յենթակա մասերը:

Բերքը կշռվում և նշանակվում ե փորձի ղեկավարի մոտ:

Ա. ԱՐԵՎԱՐԱՑՅԱՆ

## ԱՐԵՎԱՐԱՑՅԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եերկրագործության ասպարիդում վաղ ցելերի նշանակությունը շատ մեծ է: Մեր կոլտնտեսականներն այդ առավելություններն արդեն հասկացել են, վորի չնորհիվ այժմ մեր լեռնային և նախալեռնային շրջաններում վաղ ցելը կիրառվում ելայն չափերով:

Այս տարի մեր մի շաբթ շրջաններում զգալի տարածություններ վաղ ցել և կատարված, այդ ցելերից բարձր արդյունք ստանալու համար անհրաժեշտ ե տարվա ընթացքում մի շաբթ աշխատանքներ կատարել վորոնց մասին այստեղ կը խոսենք: Եելի հիմնական նպատակն ե՝

ա) հողում կուտակել խոնավություն,

բ) պայքարել մոլախոտերի ղեկ,

գ) ստեղծել նպաստավոր պայմաններ միկրոբիոլոգիական և հողմահարման պրոցեսների համար և կուտակել բույսերի համար մատչելի սննդանյութեր:

Այս առավելությունները ձեռք բերելու համար բավական չեն վարել և թողնել մինչև աշուն, այլ անհրաժեշտ ե տարվա ընթացքում հետեւը վոր ցել արված հողամասի վրա մոլախոտեր չզարգանան և հողը չկեղեակալի: Դրա համար ամեն անդամ, յերբ ցել արված հողամասում մոլախոտերը զարգանում են, պետք ե փոցիի կամ կուտիվատորի միջոցով վոչնչացնել այն, այլաւ պիս, յեթե թողնենք, վոր մոլախոտերը զարգանան (ինչպես այդ մեզ մտահաճախ և պատահում), ապա ցելն իր արժեքը կկորցնի:

քանի վոր մոլախոտերն ուժեղ զարգանալով՝ կծախսեն մեծ քաշնակությամբ ջուր, հողը կչորացնեն և, բացի այդ, մոլախոտերը հասունանալով՝ հսկայական քանակությամբ սերմեր կթափկեն հողի մեջ, վորի հետեւանալով մյուս տարի այդ հողամասի վրա ել ավելի շատ մոլախոտեր կզարգանան: Բացի մոլախոտերի դեմ պայքարելուց, հողի մակերեսին կազմված կեղելը փոցիի կամ կուտիվատորի միջոցով փշրվում է, վորի չնորհիվ վերին շերտում խախտվում են մաղական անոթները, և հողում կուտակված ջուրն արագ կերպով չի գոլորշիանում: Հողը փուլսը ե՛ մնում, վորի հետեւանքով՝ նրա մեջ գոնվող բարդ նյութերի քայլայումը և բռյամերի համար մատչելի սննդանյութերի կուտակումն արագ և մեծ չափերով և կատարվում:

Բացի հիշյալ աշխատանքներից, գարնանը, ցելահողամասը վարելուց անմիջապես հետո, պետք ե փոցին վորպեսզի հողը չչորանա, կոշտերը մանրանան և հետագա աշխատանքները հեշտ կատարվեն:

Ցել արված հողամասերում յերբեք անասուններին չպետք ե թողնել, վորոնք արածելու ընթացքում հողը տրորում, ամրացնում և փոշիացնում են:

Այսպիսով վաղ ցելերից բարձր արդյունք ստանալու համար անհրաժեշտ ե՝

1. գարնան հիմնական վարից հետո հողն անմիջապես փոցին և  
2. փոցիի և կրկնավարի միջոցով տարվա ընթացքում վոչնչացնել ցելահողամասի վրա զարգացող մոլախոտերը.

3. ուժեղ անձրևներից հետո հողի յերեսին առաջացող կեղելը փոցիի միջոցով փլրել.

4. յերբեք անասուններ չթողնել ցելահողամասի վրա:

Հ. ՓԱՆՈՍՅԱՆ.

## ՀՈՂԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԿԱՐԵՎՈՐ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ

Ինչպես «կոլխոզնիկ քիմիդատոր»ի նախորդ համարում ասված է, հողում ապրում են աղոտաբակտերիաներ կոչվող մի խումբ բակտերիաներ, վորոնք սնվում են ոդի աղատ, գաղանման աղոտով և վերջինից կուլտուրական ըույսերին մատչելի սնունդ պատրաստում: Բացի այդ, այս բակտերիաների մի խումբն ապրելով թիթեռնածղկավոր բույսերի արմատների վրա՝ նույնպես յուրացնում և բարականին մեծ քանակությամբ աղատ աղոտ և մտակարարում թիթեռնածղկավոր բույսերին:

Այսպիսով թե մեկ և թե մյուս խմբի բակտերիաներն իրենց աղոտ կապելու ընդունակությամբ մեծ ողում են տալիս կուլտուրական բույսերի սննդառության գործին:

Ինչպես գիտենք, հողի անտեսանելի բնակիչները, գլխավորապես բակտերիաները, չափազանց շատ են. մեկ գրամ հողում նրանց թիվը մի քանի հարյուր միլիոնի յէ համանում: Այս որդանիղմները վորքան շատ են, այնքան և բազմազան են: Նրանց տարրեր խմբերը հողում տարրեր աշխատանք են կատարում. մի մասը՝ ողտակար, իսկ մի մասն ել՝ թասակար: Այս անգամ ծանոթանանք այդ բազմատեսակ օրգանիզմներից մի քանիսի հետ:

Ամեն տարի հողի մեջ կուտակվում են հսկայական քանակությամբ որդանական նյութեր՝ բուսական և կենդանական մնացորդների ձևով: Այդ նյութերը հողի մեջ մտնելուց հետո նույն դրությամբ չեն մնում, այլ բավականին մեծ արագությամբ, նայած կլիմայական պայմաններին, քայլքայվում և կուլտուրական բույսերի համար մնունդ են դառնում: Վերջիններս իրենց հերթին սնունդ են դառնում կենդանիներին, և ապա մնացորդները, թե կենդանական և թե բուսական, նորից հողի մեջ կուտակվում և քայլքայվում են ու այսպես անընդհատ կատարվում և նյութերի շրջանառություն: Յեթե որդանական մնացորդների քայլքայվում և նյութերի շրջանառություն տեղի չունենար, ապա կարճ ժամանակում այդ մնացորդներով պիտի ծածկվեր յերկրագնդի մակերեսը, բայց այդ բանը տեղի չի ունենում շնորհիվ բակտերիաների և առանաբարակ մանրեների գործունեյության, վորոնք հողի մեջ մտած որդանական նյութերը քայլքայելով՝ ապահովում են իրենց և միաժամանակ կուլտուրական բույսերի սնըն-

դառնությունը: Մի մեծ խումբ բակտերիաներ, վորոնք զանազան աղոտային որդանական միացություններ քայլքայում են մինչև ամոնիակ, կոչվում են ամոնիֆիկատորներ. սրանց պատրաստած ամոնիակն անմիջապես ոդտագործում են բարձր բույսերը վորպես սնունդ: բացի այդ, ամոնիակը մի ուրիշ խումբ բակտերիաների սիջոցով վերեածվում աղոտաթթվական աղերի-նիտրատների (սելիտրա), վորը, ինչպես զիտենք, աղօտային ամենալավ պարաբանյութն ե բույսերի համար: Ահա այս խմբի բակտերիաները կոչվում են նիտրիֆիկատորներ, կամ նիտրիֆիկացիայի բակտերիաներ:

Սակայն, ինչպես վերեում ասացինք, բազմաթիվ ոգտակար մանրիների հետ միասին հողում կան և վնասակար մանրեները: Այսպես, որինակ՝ հողում վերոհիշյալ ձևով առաջացած կամ արհեստական ձևով հողին արվող աղոտային պարաբանյութերը (նիտրատները) մի խումբ բակտերիաների կողմից քայլքայվում են և վերածվում գաղային աղոտի ու դուրս գալիս հողից վորպես բույսերին անմատչելի նյութ: Այս յերեսույթը միանգամայն հակառակն և ազատ աղոտը կապվելու պրոցեսսի, մի դեպքում ողից աղատ գաղային աղոտը յուրացվում, կապվում և դառնում ե բույսերին մատչելի սնունդ, մինչդեռ վերջին խմբի բակտերիաները, ընհետակառակը՝ կապված աղոտի աղերից քայլքայում և անջատում են աղատ աղոտը, վորը մեզ համար միանգամայն ձեռնուու չե: այս յերեսույթը կոչվում է զենիտրիֆիկացիա, իսկ այս իմբի բակտերիաները՝ դենիտրիֆիկատորները: Այս պրոցեսսի ընթացքի համար հողում հարկավոր են վորոշ պայմաններ, վորոնց վրա կանդրագառնանք հետագայում:

Հողում շատ տարածված են մի ուրիշ խումբ բակտերիաներ ևս, վորոնք քայլքայում են հատկապես որդանական նյութերից փայտանյութի ցելուլոզա կոչված մասը: ուրիշ խոսքով՝ բուսական մնացորդների փայտացած մասերը, ցողունները, ծղոտը, կենդանիների աղիքներից դուրս յեկոծ անմարս մնացորդները, գոմաղբի հետ խառնված ցամքարը և այլն: Այս նյութերից հըսկայական քանակությամբ ամեն տարի հողի մեջ են մտնում և մեծ արագությամբ քայլքայվում ու սնունդ դառնում թե իրենց՝ բակտերիաներին և թե բարձր բույսերին:

Այս խմբի բակտերիաները կոչվում են ցելուլոզ քայլքա-

յողները, Բացի բակտերիաներից սնկերը ևս մեծ արագությամբ քայլայում են ցելուղան:

Մենք ծանօթացանք հողի մանրեների մի քանի կարեռ խմբերի՝ ազոտաբակտերիաների, ամոնիֆիկատորների, նիտրիֆիկատորների, դենիտրիֆիկատորների և ցելուղա քայլայողների հետ, վորոնց միջոցով կատարվում ե գլխավորապես որդանական նյութերի քայլայումը և նրանց շրջանառության կանոնավորումը: Թե ինչպես այդքան պարզ և մանր, մի քանի հարյուր, նույնիսկ հազար անգամ մեծացնելուց հետո միայն տեսանելի որդանիդմներն ընդունակ են այդպիսի հսկայական աշխատանք կատարելու և ինչ ձեռվ են նրանք այդ անում, կարելի յե բացատրել մի քանի խոսքով:

Բակտերիաների բջիջներն արտադրում են զանազան տեսակի նյութեր, վորոնք կոչվում են ենթիմներ, ֆերմենտներ (սրանցից մի տեսակը մեր լեզվով կոչվում ե մերան, վորը պատրաստում են նորածին հորթի շրդանից և ոգտագործվում ե պանիր պատրաստելու նպատակով կաթը (մակարդելու համար). այս ֆերմենտների տարբեր տեսակները նպաստում են տարբեր տեսակի որդանական նյութերի քայլայմանը: Բակտերիաների զանազան տեսակներն արտադրում են միայն վորոշ տեսակի ֆերմենտներ, վորի հատեանգով այդ որդանիդմների յուրաքանչյուր տեսակն ընդունակ ե միայն վորոշ տեսակի որդանական նյութեր քայլայմանը: Սակայն տարբեր տեսակի բակտերիաների գործունելություններն այնպես են իրար հաջորդում, վոր նույնիսկ ամենաբարդ որդանական միացություններն ել մինչև վերջը քայլայմում են:

(Նարունակելի)

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԿՏԵՐԻԱԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդկանց և կենդանիների մեջ տարածված հիվանդությունների մեծ մասի պատճառը բակտերիաներն են (մանրեները). բակտերիալ հիվանդություններ են՝ թոքախտը, տիֆը և այլն: Բակտերիաների վորոշ տեսակներն ել առաջացնում են բույսերի հիվանդություններ, վորոնց ուսումնասիրությունն սկսվել ե

անցյալ դարի կեսերին ու նույն դարի վերջերին. մի շաբք հետագություններ պարզել են այդ տիպի հիվանդությունների տարածման չափն ու նրանց տված վնասները ներկայումս արդեն պարզ ե, զոր բակտերիալ հիվանդությունները տարածվում են բոլոր յերկներում, հարմարվելով ամեն տեսակի կլիմայական պայմանների:

Բակտերիալ հիվանդությունները մեծ վնասներ են պատճառում գյուղատնտեսությանը, վարակելով բազմաթիվ կուլտուրական բույսեր: Յեվրոպական մի շաբք պետություններում պտղատու ծառերի և բանջարանցային բույսերի բակտերիալ հիվանդություններից տարեկան վնասը հաճախ հասնում է մի քանի միլիոն դոլարի: Մեզ մոտ ևս վնասը մեծ չափերի յե հասնում: առանձնապես զատ ե տարածված պտղատու ծառերի քաղցկելը (սակ), բամբակենու գոմպղը, պամիզորի հիվանդությունը և այլն:

Բույսերն իրենց արտաքին ամուր թաղանթի շնորհիվ պաշտպանված են բակտերիաների ներս թափանցումից: բակտերիաները կարող են անցնել բույսի մեջ վերքերի միջոցով կամ հերձանցքներով (չնչառության անցքեր): Բացի այդ, բազմաթիվ բակտերիաների համար բույսի ներքին միջավայրն աննպաստ ե նրանց սննդառության և զարգացման համար: Այդ և պատճառը, վոր հաճախ բույսերը շրջապատված լինելով բազմադան բակտերիաներով, չեն հիվանդանում: Հիվանդությունն առաջացնող բակտերիաները (պաթոգեն բակտերիաները) ունեն մի շաբք հատկություններ, վորոնցից զուրկ են բույսին շրջապատող բազմաթիվ այլ բակտերիաներ:

Պաթոգեն բակտերիաները կարողանում են հարմարվել բույսի ներքին միջավայրին և զարգանալ այնտեղ. այնուհետեւ նրանք արտադրում են թունավոր նյութեր, վորոնք մեծացնում են, բույսի բջիջները, ապա քայլայում նրա միջնապատերը և հեշտությամբ տարածվում բույսի մեջ:

Բակտերիալ հիվանդություններն արտահայտվում են բույսերի մեջ հիմնականում յերեք ձևով:

1. Վարակվում են բույսի տերեները, պտուղները կամ ցողունը. այն գեպքում, յեթե հիվանդությունն ուժեղ է զարգացել, վնասվում է ամբողջ բույսը. ավելի թեթև վարակման գեղքում վնասվում է բույսի այս կամ այն մասը:

2. Վարակվում են բույսի ներքին սննդատար և ջրատար անոթները. բույսի համար հիվանդության այս ձեռն ավելի վատասակար է, քան առաջինը: Ներք հիշված անոթները լցվում են բակտերիաներով, վորոնք դադարեցնում են ջրի և սննդի մատակարարումը, վորի հետևանքով բույսն ամբողջովին թառամում և վոչչանում է:

3. Վարակի ուժեղ տարածման հետևանքով արտաքին հիվանդությունն անցնում է ներքին անոթներին կամ հակառակը: Պարզ է, վոր այս ձեռն ավելի վտանգավոր է, քան առաջին յերկուս:

Բացի այս յերեք տիպի հիվանդությունից, պատահում են պաթոգեն բակտերիաներ, վորոնք իրենց արտադրած գրգորիչ նյութերի հետևանքով նպաստում են բույսի բջիջների անոթմալ արագ զարգացմանը, վորի հետևանքով բույսի այս կամ այն մասում առաջանում են ուսուցքներ, վորոնք հետագայում ավելի շատանալով խանդարում են բույսի նորմալ գործունեյությանը (որինակ՝ քաղցկեղ հիվանդությունը):

Հիվանդությունները տարածվում են վարակված բույսերի մնացորդներով, վարակված հողով, միջատների, բույսերի միջոցով, գյուղատնտեսական մեքենաների, կենդանիների ու ջրի միջոցով:

Բակտերիալ հիվանդությունների տարածմանը նպաստում են մի շաբթ հանգամանքներ, վորոնց կանխումը շատ անդամ կիրքի տնտեսությանը մեծ վնասներ պատճառելուց:

Հետևյալ համարում կտրվեն բույսերի մի քանի բակտերիալ հիվանդությունների նկարագրությունը և նրա դեմ պալքարելու միջոցները:

### Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԴՐՁԱՆԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՑԸ

«Հոկտեմբեր» կոլտնտեսության հողային ծածկոցն Ազրո-հողամայական և քիմիացման կայանն ուսումնասիրել է 1934 թ. ամառից ընթացքում: Հողային ծածկոցի ուսումնասիրության զուգահեռ

տարվել են նաև բամբակենու պարարտացման գծով փորձեր, վորոնց ավյալների հիման վրա կազմվում է հողագործության քարտեզ, վորը տալու յե կոլտնտեսության դաշտերի համար մի շարք տարիների պարարտացման պլանը: Այդ պլանում նախատեսվում են պարարտանյութերի քանակը և տեսակն ըստ ցանքաշինառության:

## «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՑԸ

Հազարավոր արբիներ առաջ Հոկտեմբերյան շրջանն իրենից ներկայացնում եր մի մեծ լիճ, վորն Ալազյաղի հբարխային գործունեյության շնորհիվ վերանում է և ծածկում բազայտի և տուփի հաստ շերտով: Հետագայում Արաքսի և ինռնային գետերի բերվածքները լցնում են այդ բազայտի ու տուփի դաշտերի վրա հողի ու խճի հաստ շերտ, և ստեղծվում է ներկային Արաքսի հողիտը: Յերբ Արաքս գետը նախալեռնային մասից ստիճանաբար իջել է յուր ներկային հունը և ամեն տարի նոր բերվածքներով ծածկում է իր ափերի բավականին մեծ տարածություն, նախալեռնային մասը մնում է Արաքսի ազդեցությունից դուրս, վորտեղ իր աշխուժ գործունեյությամբ մեծ դեր է սկսում խաղալ Մաստարա գետը. վերջինս յուր առաջ ջրերի միջոցով լեռներից բերում է մեծ քանակությամբ ավազ, քարեր և կլորավուն մանր խճ, վորոնցով և ծածկում է «Հոկտեմբեր» կոլտնտեսության հողամայակը: Ավելի ուշ Մաստարայի ազդեցությունը ևս թուլանում է և նա տարին միայն մեկ անգամ է լցվում ջրով ու մեծ մասամբ բերում է «Հոկտեմբեր» և Գեչըլու կոլտնտեսության հողերի վրա մանր, փոշիացած, ողով հարուստ, փրփրած մասսա, վորը ծածկելով հողի յերեսը՝ զոյցնում են ներկային բոզահողերը: Սարգարարատի գյուղական ջրանցքների կառուցւմներից հետո սկսվում է այդ հողերի մշակությունը, վորի շնորհիվ միանգամայն պատկերը փոխվում է, վլորվիկու ամբողջ տերիտորիայի վրա հողերի յուրացումը միանգամայն չեր կատարվում, այլ փոքր կտորներով, այն ել գյուղից ավելի մոտ մասերում: Դրա համար ել ստեղծվել են առարեր համակությունների, տարրեր չափի մըշակված հողեր և մինչև հինգ զետ մասը վացել են նաև անմշակ և թույլ մշակված հողեր: Այս հողայինը ետազոտման, «Հոկտեմբեր»

բեր» կոլտնտեսության հողամասում հանդիպում ենք հետևյալ հողատեսակների, վորոնց հաջորդական համարները տալիս ենք Հոկտեմբերյան ամբողջ շրջանի քարտեզում նշված համարներով:

Նագանակագույն-գօրը կուլտուր-վուոգելի, ըստ խորության՝ հզոր\*, միջին կավային, թույլ կմախքային\*\* հողեր, վորոնց հանդիպում ենք Սատանի սարից 0,5 կիլոմետր հյուսիս, վորպես մեկ հողակտոր: Այս հողատեսակը բավականին յերկար ժամանակ ոգտագործվել ե գյուղատնտեսական տարբեր տեսակի կուլտուրաների մշակման համար, վոռոգվել ե յերկար ժամանակ և այս բոլորի շնորհիվ դառել ե մշակված ու յուրացված հող, բամբակենու մշակման համար պիտանի:

9. Գորշ, կուլտուր-վուոգելի, միջին կավային, ըստ խորության հզոր հողեր, վորոնց հանդիպում ենք Հոկտեմբեր գյուղից Բամբակաշատ գյուղը տանող խճուղու ձախ հողմում և Հոկտեմբեր գյուղից 0,5 կիլոմետր հյուսիս-արևմուտք:

Այս հողատեսակը նույնպես բավականին յերկար ժամանակ մշակվում ե և արդեն դառել ե բամբակենու համար պիտանի:

10. Գորշ, կուլտուր-վուոգելի, միջին կավային, միջին հզորության, թույլ կմախքային հողեր, սրանք գտնվում են Կարակալա տանող ճանապարհի մոտ, Սարդարաբատ ջրանցքի տակ և Սարդարաբատ գյուղից հարավ գտնվող ճանապարհի 2 կողմը: Այս յերկու հողակտորից առաջինը լրիվ չի կուլտուրականացած, բամբակի համար պիտանի չե, բայց շատ լավ է առվույտի և խաղողի այգու համար: Յերկրորդ կտորը, վոր գյուղին մոտ ե, ցանքաշրջանառության մեջ մտնելով կոդտագործվի նաև բամբակենու մշակման համար:

23. Գորշ, թույլ կուլտուրականացած, հզոր, թեթև կավային, թույլ կմախքային: Այս հողատեսակից կա յերկու հողակտոր, մեկը գյուղից մեկ կիլոմետր հյուսիս-արևմուտք, իսկ մյուսը

\* ) Հզորություն ասելով պիտիք և հասկանալ որգանական նյութերի թափանցելու խորությունը, այսինքն սև հողի շերտի հաստությունը: Լողը լինում է հզոր, յերբ սև հողի շերտը 50 մմ ափելի յե, միջին հզորության, յերբ սև հողը 30-50 մմ ե գոչ հզոր, յերբ սև հողը 30 մմ-ից փոքր ե:

\*\*) Կմախքնշանակում ե հողի մեջ գտնված մեծ և փոքր բարերի, բանակը, յեթե քարերը հողի 10%-ի շափեն՝ անվանում ենք թույլ կմախքային, իսկ յեթե 10-30% են կաղմում՝ միջին կմախքային, և վերջապես, 30%-ից բարձր՝ համարում ենք ուժեղ կմախքային:

սատանի սարից դեպի արևմուտք: Այս հողատեսակը թեպետ ոգտագործվում ե բամբակենու համար, բայց չի տալիս մեծ բերք: Արա հետագա ոգտագործումն ավելի նպատակահարմաք ե հետեւյալ կերպ: Կամ կիրառել բամբակի ցանքաշրջանառություն և առաջին ասրին առվարձական առվարձականառություն, վորպեսզի հողն աֆելի յերկար ժամանակ մնա առվույտի և այլ խոտերի տակ ու ավելի հարստանա գյուղատնտեսական կուլտուրաների համար անհրաժեշտ մննդանյութերով: Իսկ յեթե բամբակի պլանը չի տուժի, ապա այս հողակտորներն ոգտագործել խաղողի այգու համար:

46. Գորշ, ալվալի, թեթև կավային, թույլ կմախքային հողատեսակ, գտնվում ե Կարակալա տանող խճուղուց 1 կիլոմետր հարավ, ջրանցքի մոտ: 1934 թ. ցանված եր գարի: Բնորոշվում է հետևյալ հատկություններով: Խեղատեղ դաշտում գյունառում են բուսականությունից մերկ կտորներ՝ կեղեակալած, ամուր, և այլ կտորներում մինչեւ անգամ առվույտն ել չի աճում, բայց վորոգհետեւ այդ հողատեսակը թեթև մեխանիկական կազմ ունի, ուստի նրա յուրացնելը հեշտ է, մանավանդ առվույտի միջոցով: Այս հողակտորը գեր շատ կարիք ե զգում առվույտի և զրա համար հարկավոր չե մտցնել բամբակի ցանքաշրջանառության մեջ, վորովհետեւ առայժմ պիտանի չե բամբակենու համար: Յերբ հողն առվույտով լավ կյուրացվի և կդառնա պիտանի բամբակենու համար, միաւն այն ժամանակ կարելի կլինի ցանքաշրջանառության մեջ մտցնել:

59. Բաց գորշ (բողահող), միջին կավային, կուլտուրական, վոռոգելի հողատեսակ: պատկանում է յուրացված ուժեղ բողահողերի այն տեսակին, վորոնց վերին շերտերը, յերկար տարիների ընթացքում յուրացվելով առվույտով, կորցրել են բողահողերի վատ հատկությունները և դառել բամբակենու համար պիտանի: Դրանց վերին շերտերն այլևս ուժեղ չեն կեղեակալում: Այս հողատեսակն արդեն ոգտագործվում է բամբակի համար: Նրա հետագա ոգտագործումը պետք է անպայման կատարել ցանքաշրջանառության մեջ, վորպեսզի յերկար տարիներ իրար յետերից միենույն տեղը բամբակ չցանվի, հակառակ դեպքում՝ հողը կփոշիանա, որգանական նյութերը կավական և նորից կվերածվի բողահողի:

60. Նույն հողատեսակն և միայն ավելի թեթև կավային: Կարելի յե մտցնել բամբակի ցանքաշրջանառության մեջ, բայց սկզբի տարիներն այդ տարածության վրա անպայման առվույտ մշակել:

61. Բողահող, թույլ կուտուրականացած, հղոր, ծանր-կավային. պատահում և վորպես 2 կտոր (տես քարտեղը): Այս հողատեսակը, ինչպես և մյուս բոլոր թույլ կուտուրականացած բողահողերը, ունին վատ փեղիկական հատկություններ, վորոնց շնորհիվ բամբակինին այս հողերում չի աճում: Ֆիղիկական վատ հատկությունների շնորհիվ ուժեղ և խոր կեղևակալում ե, ջուրը և ողը գժվար և ներս ընդունում:

Այս հողատեսակի յուրացման համար անհրաժեշտ և մտցնել խոտա-հացահատիկային ցանքաշրջանառություն: Բոլոր բողահողերը գտնվում են գյուղեց հյուսիս և արևելք՝ ընդհանուր, մեծ մասսիվով: Այս բողահողերը մինչեւ այժմ ոգտագործվում ենին միայն հացահատիկներ մշակելով, գորից ստացվում եր բավականին բերք, և դրա համար ել շրջանում բողահողերն անվանվում են ցորենի հողեր: Ավելի ևս մեծ բերք ստանալու համար անպայման պետք ե վոչ թե ամեն տարի ցորեն կամ այլ հացահատիկ, այլ անհրաժեշտ և հողը փոշիացումից, սննդանյութերից զրկվելուց փրկելու համար վերականգնել նրա բերքատվությունը՝ խոտաբույսերի միջոցով:

62. Նույն թույլ կուտուրականացած բողահողերից միջին կավային հողատեսակ. պատահում և յերկու հողակտորով, ոգտագործվում և հացահատիկների համար: Հետագայում անհրաժեշտ և կիրառել խոտա-հացահատիկային ցանքաշրջանառություն:

63. Բողահող, թույլ կուտուրականացած, միջին հղորության, ծանր կավային, պահանջում և նույն միջոցառումները, ինչ վոր նախորդը:

64. Բողահող, թույլ կուտուրականացած, միջին կավային, միջին հղորության. պատահում և վորպես մեկ հողակտոր. պահանջում և նույն միջոցառումները, ինչ վոր նախորդը:

65. Բողահող, թույլ կուտուրականացած, միջին հղորության, միջին կավային, թույլ կմախքային. պատահում և վորպես մեկ հողակտոր, պահանջում և նույն միջոցառումները, ինչ վոր նախորդները:

66. Բողահող, թույլ կուտուրականացած, միջին հղորության թեթև կավային, թույլ կմախքային, պատահում և վորպես յերկու հողակտոր, յուրացման միջոցառումները նույնն, են, ինչ վոր նախորդ բողահողերինը:

70. Մոխրագույն-գորշ, կուլտուր-վոռոգելի, հղոր, թեթև կավային, թույլ կմախքային հողատեսակ. հանդիպում և յերկու մեծ հողակտորով, վորի մեծ մասը ներկայումս ոգտագործվում և բամբակենու և առվույտի համար: Այս հողերը գոյացել են Մաստարայի բերած շատ թեթև կմախքային բերվածքներից: Սրանց հետագա ոգտագործումն անհրաժեշտ և կատարել ցանքաշրջանառության միջոցով:

71. Մոխրագույն-գորշ, կուլտուր-վոռոգելի, միջին հղորության, թեթև կավային, թույլ կմախքային հողատեսակից հանդիպում ենք 4 հողակտորի. նրանց գոյացման պայմանները նույնն են, ինչ վոր նախորդ տեսակինը: Ոգտագործվում են բամբակի համար, հետագա յուրացման համար դնել ցանքաշրջանառության տակ:

72. Մոխրագույն-գորշ, կուլտուր-վոռոգելի, միջին հղորության, թեթև կավային, միջին կմախքային հողատեսակից կամիայն մեկ հողակտոր՝ վորն օգտագործվում և բամբակի համար: Պահանջվում է բամբակի ցանքաշրջանառություն:

73. Մոխրագույն-գորշ, կուլտուր-վոռոգելի, միջին հղորության, կավա-ավաղային հողատեսակ. պատահել և յերկու հողակտոր, վորի վրա բամբակ և մշակվում. ցանքաշրջանառության առաջին տարիներին անհրաժեշտ և զրագեցնել խոտաբույսերով:

74. Մոխրագույն-գորշ, թույլ կուլտուրականացած, հղոր, թեթև կավային, ուժեղ կմախքային հողատեսակ. հանդիպում ենք մեկ հողակտորի, վորի վրա առվույտ և ցանքած. պահանջվում է հետագա յուրացում՝ առվույտով:

75. Մոխրագույն-գորշ, թույլ կուլտուրականացած, միջին հղորության, թեթև կավային, թույլ կմախքային հողատեսակ-ներից կան 3 հողակտոր, վորոնք մշակված հողեր են, բամբակենու համար վոչ, պիտանի և իրենց յուրացման համար պահանջում են յերկար տարիներ զրագեցնել առվույտով:

76. Մոխրագույն-գորշ, թույլ կուլտուրականացած, վոչ-հղոր, թեթև կավային, միջին կմախքային հողատեսակը պատահել և 2

հողակտոր. բամբակի համար պիտանի չե, յուրացման համար անհրաժեշտ ե յերկար տարիներ զբաղեցնել առվույտով:

77. Մոխրագույն-գորշ, թույլ կուլտուրականացած, վոչ հզոր, կավա-ալզազային, թույլ կմախքային հողատեսակ. հանդիպել ե մեկ հողակտոր, վորն զբաղեցրած եր գարով. բամբակի համար անպետք ե: Յուրացման համար անհրաժեշտ ե զբաղեցնել առվույտով:

78 և 79. Մոխրագույն-գորշ, չյուրացված, վոչ հզոր, կավա-ալզազային, միջին և ուժեղ կմախքային հողատեսակներ գտնվում են Սատանի սարի մոտ գտնվող բըրակների վրա և մի փոքր կտոր հողամաս ել գյուղի հյուսիսարևմտյան մասում՝ ջրանցքի տակ: Այս հողատեսակներն անմշակ են ուլյեֆի վատ դիրքի պատճառով. ջրով ապահովելու դեպքում հնարավոր և ոգտագործել խաղողի կամ պտղատու այգիների մշակման համար:

Բամբակի ցանքաշրջանառությունից դուրս գտնվող բոլոր հողատեսակներն իրենց բնական հարստությունով՝ առատ կը ըստ, կավա-ալզազային մեխանիկական կազմով, առատ կմախքով, ջրի և ողի թափանցելու համար նպաստավոր պայմաններով և այլն, նպաստավոր են խաղողի և պտղատու այգիների մշակման համար:

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՇՐՋԱՆԻ «ՆՈՐԱՊԱՏ» ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՑ

«Նորապատ» և «Հոկտեմբեր» կոլտնտեսությունների հողերը գոյացել են Մաստարայի բերվածքներից. հողատեսակները հետեւյալներն են.—

9. Դորշ, կուլտուր-վոռոգելի, հզոր, միջին կավային հողատեսակ. հանդիպում ենք մի հողակտորի «Հոկտեմբեր» տանող խճուղու մոտ, ՄՏ կայանի հողերին կից: Այս հողամասը բավականին մշակված է. 1934 թ. ցանքած եր բամբակ. հետագա բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ ե կիրառել բամբակի ցանքաշրջանառություն:

59. Բողահող, կուլտուր-վոռոգելի, հզոր, միջին կավային հողատեսակ. հանդիպում ենք 2 հողակտորի՝ մեկը ՄՏ կայանի հողերից անմիջապես հարավ, իսկ մյուսն ամբողջ գյուղի շուրջ:

Այս հողատեսակը յերկար տարիների ընթացքում լավ յաւրացվել ե թե խոտաբույսերով, և թե ուրիշ կուլտուրաներով, և դրա համար բողահողի վատ ֆիզիկական հատկությունները վերացել են, և հողը կորցրել ե բողահողի բոլոր հատկությունները: 1934 թ. գտնվում եր բամբակի մշակության տակ. բերքատվությունը բարձրացնելու համար պահանջում ե ցանքաշրջանառություն:

61 և 64. Բողահող, թույլ կուլտուրականացած, առաջինը՝ հզոր, ծանր կալվային, յերկորդը՝ միջին հզորության, միջին կավային. ունին բողահողին բնորոշ ֆիզիկական վատ հատկություններ, վորոնց զնորհիվ բամբակենին չի աճում այդ հողերում: Այս հողերի յուրացման և բերքատվության բարձրացման միջոցը խոտահացատիկային ցանքաշրջանառությունն ե:

79. Մոխրագույն-գորշ, անմշակ, վոչ հզոր, կավա-ալզազային, ուժեղ կմախքային հողատեսակ. գտնվում է ՄՏ կայանի հողերից դեպի արևմուտք՝ մեկ մասսիվով: Ուժեղ կմախք ունենալու պատճառով այս հողակտորի միակ յուրացման միջոցը խաղողի այգին ե:

«Նորապատ» կոլտնտեսության բամբակի ցանքաշրջանառությունից դուրս գտնվող բոլոր հողատեսակների հետագա սպառագործումը սկզբ կապված է «Հոկտեմբեր» քաղաքի կառուցման հետ:

Քաղաքի աճման հետ զուգահեռ, այդ հողերի մեծ մասն անհրաժեշտ կլինի սպառագործել պտղա-բանջարաբուծական կուլտուրաների համար՝ քաղաքի որեցոր աճող պահանջը բավարարելու տեսակետից:

## Հ. ԱՆԱՆՅԱՆ

### ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

Հոկտեմբերյան շրջանում Քիմիացման և Ագրո-հողագիտական կայանի կողմից 1934 թ. կատարված հողագիտական հետազոտությունները ցույց են տալիս այդ շրջանի հողերի ուժեղ խայտարկելություն:

Բացի գորշ և շագանակագույն-գորշ հողերից, վորոնք կազմում են շրջանի հողերի մնաղ միծամասնությունը, կան նաև

բողահողեր, տարբեր աստիճանի աղիացած և ճահճացած հողեր ու աղուտներ: Բացի դրանցից, զգալի տարածություններ են գրավում ավագուտները և քարքարուտները:

Այս հողատեսակներից յուրաքանչյուրը բաժանվում է բազմաթիվ տարատեսակների, վորանք երարից տարբերվում են ըստ իրենց մեխանիկական կազմի (կավային, կավա-ավաղային, ավաղա-կավային, ավաղային և այլն), ըստ հղորության (հղոր, միջին և թույլ), քարքարուտներից յանձնելու համար և այլն:

Ստորև բերված աղյուսակում ցույց ե տրվում, թե հիշյալ հողերը Հոկտեմբերյան շրջանում ինչպես են տարածված:

Հարթականություն Բյունակ հիմքում	Տարբերակի վրա պարագաների այտութեան աշխատավորում	Աղյուսական հիմքում
1 Շագանակադաշտի հաղորդական	Քայլական վրա պարագաների աշխատավորում	Հիմայի աղանձնամեջ սպասազործի վրա մենակալար-գործության և քլանի շրջանի ու առ-
2 Պողոս	Քըալական վրա պարագաների աշխատավորում	գործության և քլանի շրջանի ու առ-
3 Մոխագուհի գորդ	(Քուրուկների վրա) բարեխալաշտու, Հոկտեմբեր	գործության համարը.
4 Բողահողեր	Հոկտեմբերի, Գեղարկու, Նորապատ	Գումարուապես ցորենի և քլան չափով առկայ-ալ համար.
5 Տարբեր աստիճանների աղիացած հողեր	Ուղարկու ուղարկու, Եղիշւարու, Զիւտուի- չի, Մուլտ-Բարդու Արտաշատ	Թույլ աղիացած տեսագիրը բամբաւի հա- ցողների, առկայութեան ուղարկու բամբաւի,
6 Աղուտներ	Ուղուն-բար, Եղիշւար, Զիւտուիչ, Մուլտ- բարան, Արտաշատ, Ղամբու	Ուժի աղիացած տեսագիրը արտաշատի և քիչ չափով ցորենի ու առկայութեան համար.
7 Տարբեր աստիճանների հանձնացած	Ուղուն-որս, Զիւտուիչ, Արշարու	Թույլ և միջակ հանձնացած տեսագիրը՝ բամ- բաւի ուժի հանձնացած տեսագիրը՝ աղուտ- ների.
8 Ավագուտների հարթականությունից	Զամփալաւաս, Փոքր և Մեծ Շահութար, Զամփիլու	ի բանց գործության վեհակում անողուտագործելի ի ճն

ՆԱԴԱՆԱԿԱԳՈՒՅՆ-ԳՈՐԾ, ԳՈՐԾ ՅԵՎ ՄՈԽՐԱԳՈՒՅՆ-ԳՈՐԾ  
ՀՈՂԵՐ

Այս հողատեսակները շրջանի ամենատարածված և բամբակենու մշակության համար ամենպայիտանի հողերն են: Առանձնապես արժեքավոր են այս հողերի կավա-ավաղային և թեթև կավա-ավաղային տեսակները, զօրոնք, շնորհիվ իրենց փիլորուն վիճակի, թույլ կեղեակալման և համեմատաբար լավ ջերմունակության, ավելի նպաստավոր են բամբակենու գարգացման համար:

Հանքային պարարտանյութերի տված արդյունքն այս հողերի թեթև տեսակների վրա ավելի բարձր է, քան ծանր կավային տեսակների վրա: Այսպես, որինակ՝ անցյալ տարի Զաֆարաբատի, Քյալագյարխի, Իգդալուի, Ուզուն-Ռբայի կողտնտեսություններում դրված փորձերը ցույց են տալիս հետեւյալ պատկերը.—

Աղյուսակ № 2

Աղյուսակի հարաբեկությունը	Աղյուսակի հարաբեկությունը	Աղյուսակի հարաբեկությունը	Աղյուսակի հարաբեկությունը	Աղյուսակի հարաբեկությունը
Վարակիղ եր դրված փորձը	Ինչպիսի հողի վրա յեր դրված փորձը	Առանց պարզաբանության առաջնային առանձնահատկությունը	Աղյուսակի հարաբեկությունը (առաջնային առանձնահատկությունը)	Աղյուսակի հարաբեկությունը (առաջնային առանձնահատկությունը)
1. Զաֆարաբատի կուտնականություն	Շագանակաղույն-գորշ միջին կավային հող	Բամբակի բերքը ցեղաներով 1 հեկ.	9.69	11.21
2. Քյալագյարխի >	“ ու յ ն ը	10.97	13.08	10.31
3. Իգդալուի >	Գորշ կավա-ավաղ.	16.49	21.06	17.72
4. Ուզուն-Ռբայի >	հող Գորշ թեթև կավա-ավաղային	28.43	31.66	25.48
				33.15

Հոկտեմբերյան շրջանում դրված այս փորձերը և մի շաբաթ վորձերը ցույց են տալիս, վոր ծանր և միջին կավային հողատեսակների վրա բամբակենու բերքը համեմատաբար ցածր է, իսկ կավա-ավաղային և թեթև կավա-ավաղային հողատեսակների վրա բամբակենին տալիս ե ավելի բարձր բերք, ինչպես նաև պարարտանյութերի տված արդյունքն այդ հողերի վրա ավելի բարձր ե լինում: Այս հետեւանք ե այն բանի, վոր թեթև հողերի

ֆիզիկական հատկությունները (փխրունություն, ջերմունակություն և այլն) ավելի նպաստավոր են բամբակենու զարգացման համար:

Նկատի ունենալով Հոկտեմբերյան շրջանի հողերի նման խայտարդետությունը, յուրաքանչյուր հողատեսակի հետ պետք է լավ ծանոթանալ և ըստ այնմ ամեն մեկի համար կիրառել համապատասխան ագրոձեռնարկումներ, մշակել համապատասխան սորտեր և այլն. այլ խոսքով՝ անհրաժեշտ ե կատարել շրջանի միկրոռայնացումը, վորի շնորհիվ հնարավոր կլինի հեշտ և ծրագրված կերպով ամեն մի հողի նկատմամբ ունենալ յուրահատուկ մոտեցում:

### ԲՈԶԱՀԱՐԴԵՐԻ

Հոկտեմբերյան շրջանում բազահողերն պահպան տարածություն են գրավում: Այս հողերը տարածված են Հոկտեմբեր, Նորապատ, Գեղըլու գյուղերի շրջակայրում:

Բոզահողերը բնորոշ են ծանր կամ միջին կավային մեխանիկական կազմով, շատ ամբացած են և ջրելուց հետո հաստ ու ամուր կեղև են կազմում: Շնորհիվ անբարենպաստ Փիզիկական հատկությունների, բոզահողերի վրա մեծ մասամբ մշակվում ե ցորեն կամ ապկույտ, վորոնք համեմատաբար ավելի հեշտ հաշտվում են այդպիսի պայմանների հետ, քան բամբակենին:

Բոզահողերի անբարենպաստ Փիզիկական հատկությունները կարելի յել լավացնել կանոնավոր ցեղագրչանառության միջոցով, վորի մեջ բազմամյա խոտաբույսերը զգալի տեղ պետք ե գրավեն:

(Եարունակելի)

### Հ. ՍՄԲԱՏՅԱՆ.

## ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խրճիթ-լաբորատորիաների աօխատանքների առաջին հանրագումարն ասում է այն մասին, թե այդ սկիզբն տնվինելիութեն աժմելական է, յև վոր այդ գործը պիտանի ու նիւթ է:

Ուրեմն յեկեմ, բոլենվիկարեն, բոլորս միասին պայտարենք զյուղում խրճիթ-լաբորատորիաները վերածելու տգրոկուլտուրայի խսկական ոջախնների:

Պ. Պ. ՊՈՍՏԻՇԵՎ

Միության մի շարք հանրապետություններում լայն ծագալ են ստացել խրճիթ-լաբորատորիաների կազմակերպման աշխատանքները: Ուկրայինայի, Հյուսիսային կովկասի, Մերձիրի շրջաններում և այլ վայրերում արդեն կազմակերպված են հարյուրավոր և հազարավոր խրճիթ-լաբորատորիաներ: Միայն Ուկրայինայում այժմ կա մոտ 5,5 հազար խրճիթ-լաբորատորիա:

Խրճիթ-լաբորատորիաների ընդունենք մեկ տարվա փորձը ցույց ե տալիս, թե նրանք վարքան մեծ նշանակություն ունեն կուլտուրանությունների դաշտերի բերքատվության բարձրացման գործում:

Այս առթիվ ընկ. Պոստիշեվն ասում է «Մեր՝ լավագույն խրճիթ-լաբորատորիաներն արդեն դարձել են փորձնական գործի ազգային համակարգի տիրապետման պայտարի, զյուղատնեսական գիտությունների նորոգույն նվաճումների ներդրման, կայեկիթի տնտեսության դրական փորձի բնդիմացման ու տարածման գործի կազմակերպող կենտրոնները»:

Չնայած այս բոլորին մեզ մոտ այս ուղղությամբ աշխատանքները թույլ են տարվում:

Հողմագումատի համապատասխան բաժինները, ՄՏԿ-ները, հողբաժինները դեռևս լուրջ ուղաղբություն չեն դարձել այս կարևոր խոնդրի վրա, վորի շնորհիվ մինչև այժմ համարյա մեր վոչ մի կոլտնտեսություն չունի կազմակերպված խրճիթ-լաբորատորիա:

Ստորեւ տալիս ենք խրճիթ-լաբորատորիաների գծով կազմակերպված համամիութենական առաջին խորհրդակցության վորոշումների մի մասը:

## ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՊԱԶԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Բերքատվության բարձրացման և անասնապահության զարգացման առաջարկում կոլտնտեսության արտադրության առաջդրված հսկայական խնդիրների լուծումը պահանջում ե կոլտընտեսականների կուլտուրական մակարդակի բարձրացումը և գյուղատնտեսական գիտության ու տեխնիկայի տիրապետումը:

Միության կոլտնտեսություններում լայն ծագալ ստացող խրճիթ-լաբորատորիաները, կոլտնտեսականներին սոցգյուղատնտեսական գիտության ու տեխնիկայի յուրացման գործին ներդրավելու խնդրում հանդիսանում են ամենամատչելի ու հասկանալի ձեզ: Խրճիթ-լաբորատորիաները կոլտնտեսականների լայն ինքնագործունեյությունը միացնում են կոլտնտեսական արտադրության անմիջական պրակտիկայի հետ:

Խրճիթ-լաբորատորիաները, վորպիս գյուղատնտեսական կուլտուրայի կենտրոնները, պետք ե դառնան յուրաքանչյուր կուլտնտեսության սեփականությունը:

## ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՑԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Խրճիթ-լաբորատորիաները կազմակերպվում են տեխնիկայի յուրացման և գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գործում կոլտնտեսականներին կոնկրետ ոգնություն ցույց տալու նպատակով և հանդիսանում են կոլտնտեսական արտադրության անբաժան մասը:

2. Խրճիթ-լաբորատորիաների առաջնակարգ խնդիրներն են.

ա) Կոլտնտեսականների ազգային պատրաստականությունը բարձրացնելու նպատակով՝ ագրո-զոռոտեխնիկական խմբակների, դասախոսությունների, զրույցների, արտադրական հրահանգների, ցուցահանդեսների, կուրսերի և այլ կազմակերպումք:

բ) Կոլտնտեսություններում մասսայական փորձնական, ստեղծագործական-ուսցիչնալիստական աշխատանքների կազմակերպումը:

գ) Կոլտնաեսության արտադրության տեխնիկական-արտադրական կոնտրոլի և գյուղատնտեսության արտադրանքի վորակի բարձրացման հետ կապված պարզ անալիգների ու հետազոտությունների կազմակերպումը (սերմերի, կերի, հողի, գյուղատնտեսական արտադրանքի անալիգներ, աշնանացանների դրության և կուլտուրաների հասունացման մասին դիտողություններ, գյուղատնտեսական վնասատուների և մոլախոտերի ուսումնասիրությունը և այլն):

## ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

1. Խրճիթ-լաբորատորիաների կազմակերպման հարցը լուծում ե կոլտնտեսականների ընդհանուր ժողովը, վերտեղ միաժամակ վորոշում են նյութական միջոցների չափը և աղբյուրները:

2. Կոլտնտեսության վարչությունը խրճիթ-լաբորատորիաների համար առանձնացնում ե 2-3 սենյակից բաղկացած հատուկ շենք, ապահովում ե կահավորումով, վառելանյութով՝ լուսավորությունով և տրամադրում ե մինչև մեկ հեկտար հողամաս այն փորձերի համար, վորոնք հնարավոր չե արտադրական պայմաններում կատարել (որինակ նոր կուլտուրաներ մշակելու փորձերը, նոր ազգութեանարկումների կիրառման փորձեր և այլն):

3. Ազրո-զոռութիւնիկական, տնտեսության կազմակերպման ու գյուղմեքենաների ու գործիքների ոգտագործման զծով կատարվող ուսումնասիրությունների հիմնական աշխատանքները տարգում են խրճիթ-լաբորատորիաների կողմից արտադրության կոնկրետ պայմաններում բրիգադից հողամասում, այլում, բանջարանոցում, գոմում և այլն:

4. Խրճիթ-լաբորատորիան իր բոլոր հիմնական աշխատանքները տանում ե կոլտնտեսության առաջատար աշխատանքների ուղղությամբ և կայուն պլանի հիմն վրա, վորը հաստատվում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովում, մտցվում է կոլտնտեսության արտադրական պլանի մեջ:

Խրճիթ-լաբորատորիայի պլանի մեջ մտցվում է կոլտնտեսության արտադրության կարևորագույն խնդիրները, ինչպես նաև կոլտնտեսականների կողմից հարուցված հարցերը, վորոնք հնարավոր կլինի յեղած ուժերով, միջոցներով ու սարքավորումով լուծել:

5. Խրճիթ-լաբորատորիայի աշխատանքների ղեկավարման համար կոլտնտեսության վարչությունը լավագույն կոլտնտեսական հարվածայիններից մեկին (փորձառու ծերերից, կոմյերիտականներից և այլն) նշանակում ե վարիչ, վորը պետք և գրագետ կոլտնտեսության գյուղատնտեսության արտադրությունից լավ հասկացող և փորձնական գործը սիրող մարդ լինի:

6. Խրճիթ-լաբորատորիայի աշխատանքի ծավալից յենելով վարիչն իր պարտականությունները կարող ե կատարել համատեղության կարգով, կամ վարչության վորոշումով մյուս աշխատանքներից աղատվում ե և միայն այդ աշխատանքն ե կատարում:

7. Խրճիթ-լաբորատորիայի վարիչի աշխատանքը վարձատըրման կում և աշխորերով, համաձայն աշխատանքների ծավալի և վորակի:

Վարձատըրության չափը նշանակում ե կոլտնտեսության վարչությունը՝ համաձայննելով այն հողբաժնի կամ ՄՏԿ-ի հետ և հաստատվում ե կոլտնտեսականների ընդհանուր ժողովում:

8. Խրճիթ-լաբորատորիայի վարիչը պատասխանառու յե խրճիթ-լաբորատորիայի բոլոր աշխատանքներին, փորձերի և դիտողությունների արդյունքների հաշվառման, ինչպես նաև պարտավոր և խրճիթ-լաբորատորիայի ունեցած նվաճումների մասին կոլտնտեսության վարչությունում և արտադրական բրիգադներում իր ժամանակին զեկուցել և այդ նվաճումները փոխազրել կոլտնտեսության արտադրության մեջ:

Խրճիթ-լաբորատորիայի վարիչն աշխատանքների արդյունքները լուսարանում ե կոլտնտեսային և շրջանային թերթերում:

9. Կոլտնտեսության վարչությունն ապահովում և ինչպես անմիջականորեն կոլտնտեսության արտադրությունում, այնպես ել խրճիթ-լաբորատորիայի հողամասում դրված փորձերի պահպանումը, ինչպես նաև ապահովում և խրճիթ-լաբորատորիայի շենքների և իրերի պահպանումը:

10. Շրջանում խրճիթ-լաբորատորիաների կազմակերպման, նրանց աշխատանքների հաշվառման ու շրջանի կոլտնտեսադրության նվաճումների ոգտագործման աշխատանքների համար պատասխանառու յեն շրջնողբաժնի և ՄՏԿ-ի ավագ գյուղատնտեսները:

11. Խրճիթ-լաբորատորիայի աշխատանքները տանում են կոլտնտեսականները, առաջին հերթին կոլտնտեսակտիվը, խրճիթ-

լաբորատորիայի վարիչի ղեկավարությամբ և գյուղատնտեսի, անասնապահի, անասնաբուժի ու գյուղատնտեսական այլ մասնագետների խորհուրդներով, վորոնք խրճիթ-լաբորատորիաներին ամբացված են լինում շրջնողբաժնի և ՄՏՏԿ-ի կողմից:

12. Խրճիթ-լաբորատորիաների գիտական-մեթոդական ղեկավարությունը կատարում է Հանրապետական Հողմողկոմատը՝ գիտահետազոտական հիմնարկների միջոցով:

13. Խրճիթ-լաբորատորիաների բոլոր աշխատանքները պետք են առարկեն սոցմրցման և հարվածայնության հիման վրա և աշխատանքներին լայն չափերով ներդրավեն կոլտնտեսական մասսության:

14. Խրճիթ-լաբորատորիաների աշխատանքները տարվում են սերտ կտոր պահպանելով կուսակցական, կոմյերթական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների ու մամուլի հետ:

15. Խրճիթ-լաբորատորիաները զանազան փորձեր, գիտողություններ ու անալիկներ կատարելու համար պետք են ունենան անհրաժեշտ սարքավորում և այլ պիտույքներ (կոլեկցիաներ, աղյուսակներ և այլն):

«Կոլխոզնիկ ֆիմիգատոր»-ի խմբագրությաւնը խնդրել եր կոլտնտեսականներից յեվ գյուղատնտեսական տապարիզում աշխատող այլ ընկերներից—իրենց փորձերի փոխանակման կարգով տալ հողվաճեր՝ հողի պարտացման յեվ արդասեխնիկայի ուղղությամբ։ Ստկայն մինչեվ այժմ, դժբախտաբար, տա ինչ ընկերներ արձագանքին, այն ինչ ըջաններում տա ընկերներ կան, վարոնք մեր «Կոլխոզնիկ ֆիմիգատոր»-ի միջոցով կարող են իրենց բազմամյա փորձին մտանակից դարձնել մյուս կոլտնտեսություններին, վորով աջակցած կլինեն բերքատվության բարձրացմանը։

Այս համարում տպում ենք Ղամարուչի ՄՏՏԿ-ի ագրոնոմ-ֆիմիգատոր ընկ. Ա. ՄելիքՍեթօնի հոդվածը։

## ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Բերքատվության բարձրացման գործում ագրոտեխնիկական ձեռնարկումների ընդհանուր շարանում իր նշանակալից ու կարուր տեղն ե գրավում հողերի պարարտացումը ընդհանրապես ու հանքային նյութերով պարարտացումը մասնավորապես։

Մեզ մոտ գյուղատնտեսության արտադրության պայմաններում թեպետ և հանքային պարարտացումը չունի հին անցյալ քայլ և այնպես, վորպես բերքատվության բարձրացման միջոց, արդեն իսկ համարվում է մասսայական լավագույն միջոցներից մեկը։ Ճեղտ ե, պարարտացման տեխնիկան դեռ ևս վոչ ամենուը ըեք իր բարձրության աստիճանի վրա յե, բայց և այնպես յերբ համեմատելու լինենք մինչև իսկ անցյալ տարվա հետ, պետք են խոստովանենք, վոր ընթացիկ տարում պարարտացման աշխատանքներն ընդհանրապես անհամեմատ հաջող են կատարվել։

Մենք այժմ անհրաժեշտ ենք համարում կանդ առնել մեր շըշջանի (Ղամարլուի) կոլտնտեսություններում պարարտանյութերի պահստաներ ունենալու խնդրի վրա, վորպիսին պետք ե անմիջականորեն շաղկապել պարարտանյութերի խնամքի ու պահպանման հետ, նախքան այդ պարարտանյութերն ոգտագործելը, այս հանգամանքը վճարական նշանակություն ունի պարարտանյութերի թե վորակի և թե քանակի տեսակիտից։

Մեր շրջանի կոլտնտեսությունների մեծ մասը դեռ ևս չունի հանքային պարարտանյութերի համար առանձնացված հատուկ պահստաներ։

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր հանքային պարարտացման գործն ունի խոշոր հետանկարներ, անհրաժեշտ և վճռականորեն ու մտածված կերպով լուծել այդ խնդիրը։

Մեր կարծիքով անհրաժեշտ ե, վորպեսզի Հողմողկոմատի համապատասխան բաժինը մի քանի տարբեր տարրողության (ըստ կոլտնտեսությունների կուլտուրաների և հողերի ընդհանուր տարածության) հանքային պարարտանյութերի պարզ ու ստանդարտ պահստաների պրոյեկտները մշակի, վորոնց համաձայն կոլդարտ պահստաների մեջ գործության հրենց միջոցներով կամ թե վարձով կարող կլինեն կառուցել այդ պահստաները։

ՄՏՏԿ կայանի պահստաները (Ուլուխանուլու և Ղամարլու), վորոնց գործությունը նույնպես նվաճման մի փաստ ե (քանի վոր յերկու տարի առաջ վոչ մի պահստ չկար), նույնպես միսիթայերկու տարի առաջ վոր մեջ չեն գորնվում։ Նախ և առաջ թե Ուլուրական դրության մեջ չեն գորնվում։ Նախակը հողեց ե, վորի խանըլի և թե Ղամարլի պահստաների հատակը հողեց ե, վորի հետեւնքով մեծ քանակությամբ պարարտանյութի կորուստ և մինում հողի հետ խառնվելու, խոնավություն ծծելու, վրտքի առակնիւղութերի քիմիկատոր—3

միշտանալու և այլ պատճառներով, իսկ Ուլուխանլիլի պահեստն ավելի վատթար դրության մեջ ե, զորովհետև ներսի միջապատերի ու պահեստի գրագենյակի (վորտեղ միաժամանակ պետք և բնակվի նաև պահեստապետը) կառուցումը լրիվ ավարտված չե. բացի այդ պահեստի կտորը ծածկված ե ետերնիտով, ըստյերելույթին այնքան անջնորնք կերպով, զոր յուրաքանչյուր քամու ժամանակ տասնյակ ետերնիտում պահեստի կտորից թոշում են և կտորի վրա անցքեր են առաջանում, վորոնցից ներս և թափանցում անձրեն ու ձյունը: Անկանոն և վատ դրության մեջ ե նաև պահեստի մյուս կողմի ճանապարհը, վորտեղից կոլտնտեսականների սայլերը փոխադրում են պարարտանյութերը:

Մի քանի խոսք ևս պահեստների կշեռքների մասին: Պահեստներում կան տասնորդական կշեռքներ և տախտակի արկղի չափեր, վորոնցով պահեստը բաց ե թողնում պարարտանյութը: Այդ կշեռքներից շատ անգամ պահեստապետը չի կարող ոգտվել վորոնցնետև գա շատ ժամանակ ե խլում, բացի այդ, հաճախ պարարտանյութերն ստացվում են առանց տարայի, վորի հետեանգով մեծ մասամբ ոգտվում են այդ չափերից:

Զափերը շատ հաճախ վիճաբանության առարկա յին դառնում և իսկապես վոր շատ անհուսալի միջոց են զորպիս պարարտանյութ բաց թողնելու չափեր:

Մեր կարծիքով անհրաժեշտ է պահեստների (ՄՏ կտյանների) համար կառուցել սայլի կշեռքներ, վորոնք անհամեմատ կհեշտացնեն պահեստապետի աշխատանքն ու, բացի այդ, միանգամյան ճիշտ քանակությամբ կղզան պարարտանյութերը:

Այսպիսով՝ անհրաժեշտ ենք համարում կրկին անգամ դիմեռ Հողժողկոմատին, վոր նա քննության առնի ՄՏ կայանի պարարտանյութերի պահեստների խնդիրն ու կարճ ժամանակամիջոցում հնարավորություն ստեղծի հիշյալ թերությունները վերացնելու, պահեստի հատակը փայտից կամ ցեմենտից պատրաստելու ու սայլի կշեռքներով պահեստներն ապահովելու համար:

### Ա. ՄԵԼԻՔՄԵԹՅԱՆ.

## ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀԱՐՑ. — Բամբակենու վեգետացիայի ժամանակ կարելի՞ յե դաշը պարարտացնել հուսպով յել տեղական պարարտանյութերով (մոխիր, ավերակների նող յել այն):

ՊԱՏԱՍԽԱՆ. — Վոչ: Բուսպով պարարտացնել միտք չունի, քանի վոր քուսպն որդանական նյութ լինելու հետեւանքով բույսերին մատչելի սննդանյութ դառնալու համար պահանջում ե յերկար ժամանակ, այնինչ վեգետացիայի ընթացքում բամբակենին պետք ե պարարտացնել այնպիսի նյութերով, վորոնք կարճ ժամանակմիջոցում կյուրացվեն բույսի կողմից:

Մոխրով և ավերակների հողով նույնպես միտք չունի, քանի վոր առաջինն իր մեջ ազոտային նյութեր չի պարունակում, իսկ յերկրորդն այնքան քիչ ազոտ և պարունակում, վոր միայն շատ մեծ քանակությունը կարող ե վորոշ արդյունք տալ, իսկ այդ հնարավոր չի վեգետացիայի ընթացքում: Բացի այս, ավերակների հողերի ու մոխրի մեջ գտնվող սննդանյութերը դյուրաշարժ չեն և դրա հետեւանքով մակերեսային պարարտացման ժամանակ նրանք հեշտությամբ և կարճ ժամանակում չեն կարող մինչև բույսի արժատները հասնել:

ՀԱՐՑ. — Բամբակենու վեգետացիայի ընթացքում դաշնի ի՞նչ նյութերով կարելի յե պարարտացնել:

ՊԱՏԱՍԽԱՆ. — Պետք ե պարարտացնել միայն ազոտային պարարտանյութերով, վորոնցից պիտի զերազասել ունիտրաները (Զիլիական սելիտրա, ամոնիում նիտրատ, լիյնառուելիտարա և այլն), իսկ վերջիններից չճարվելու դեպքում կարելի յե գործադրել ամոնիում սուլֆատ:

ՀԱՐՑ. — Առվույսն ի՞նչ նյուրերով յեվ յե՞ր պես և պարարտացնել:

ՊԱՏԱՍԽԱՆ. — Առվույսը պետք է պարարտացնել վոսփորի և կամումի պարարտանյութերով կամ մոխրով: Պարարտանյութերը տալ ցանկլուց առաջ կամ աճող առվույսը հնձելուց հետո պարարտանյութը շաղ տալ, փոցիսել և ջրել:

ՀԱՐՑ. — Ի՞նչ նեանակուրյուն ունեն հանետյին պարարտանյութերը վնասառուների յեվ հիվանդուրյունների դեմ պայքարելու գործում:

ՊԱՏԱՍԽԱՆ. — Պարարտացը դաշտերում բռւյսերն ավելի փարթամ և առողջ աճելու շնորհիվ ավելի դիմացկուն են լինում հիվանդությունների և վնասառուների հանդեպ: Բացի այս, ցիանամիջը, բացի վորպես պարարտանյութ կիրավելուց, նաև գործ և ածվում աշնանացան հացահատիկների մեջ և մարգարետիններում մոռոշ վնասառուների և մոլախոտերի դեմ պայքարելու համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բամբակենու խնամքը	3
2. Վեգետացիոն պարարտացում	4
3. Կատարենք պարարտացման պարզ փորձեր	7
4. Վաղ ցելերի հետագա մշակությունը	10
5. Հողի մի խումբ կարենը բակտերիաներ	12
6. Բույսերի բակտերիալ հիվանդությունները	14
7. Հոկտեմբերյան շրջանի «Հոկտեմբեր» կոլտնտեսության հողային ծածկոցը	16
8. Հոկտեմբերյան շրջանի հողերի բնութագիրը	23
9. Խրճիթ-լաբորատորիաների մասին	28
10. Խրճիթ-լաբորատորիաների գծով համամիութենական առաջին խորհրդակցության վորոշումներից	29
11. Հանքային պարարտանյութերի պահեստների մասին	32
12. Հարց ու պատասխան	35



Պատ. Խմբագիր՝ պրոֆ. Պ. Քալամբարյան  
Տեխ. Խմբագիր՝ Հ. Մուրադյան  
Լեզվ. Խմբագիր՝ Արք. Գրիգորյան  
Մրացրիչ՝ Թ. Ախայան

---

Հրատ. № 247, Գլավկիսի լիազոր Պ. 127

Գատվեր № 475, տիրաժ 2000

Հանձնվել եւ արտադրության 1935 թվի հուլիսի 25-ին  
Ստորագրվել եւ տպագրելու 1935 թվի սգոստոսի 27-ին

---

Գյուղերատի տպարան, Ցերևան, Նալբանդյան № 11.



NL0937719

ԳԻՒԾ 50 Կ.

1935 - 465

11

28114

БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА

КОЛХОЗНИК  
ХИМИЗАТОР

СЕЛЬХОЗГАЗ  
ЗРИВАЛЬ  
1986